# Ծանուցում

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երեւանի պետական համալսարանը կատարում է 2008-2009 ուսարվա հեռակա ուսուցման ընդունելություն՝ 30 մասնագիտությունների գծով:

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ սեպտեմբերի 20-ը: Քննությունները անց են կացվելու հոկտեմբերի 9-20-ը: Դիմումի հետ պետք է ներկայացնել՝ միջնակարգ կրթության ատեստատ, միջին մասնագիտական եւ մասնագիտական տեխնիկական կրթության մասին փաստաթուղթ (բնօրինակը), 6 լուսանկար (3x4 սմ չափսի), անձը հաստատող փաստաթուղթ, զինվորական գրքույկ եւ զինվորական կոմիսարիացից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայության մասին: Հեռակա ուսուցումը տեւում է 5 տարի: Ուսման ավարտին տրվում է բակալավրի որակավորում: **Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ԵՊՀ, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ ընդունող հանձնաժողով, հեռ.՝ 55 50 41:**

### ՑԱՆԿ
### ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԵՐԻ

| Շիֆր | Մասնագիտություն | Ընդունելության քննություններ | | | | Ընդունելության տեղերը | | Վարձ (հազար դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Մրցութային | | | Ոչ մրցութային | Ընդհանուր | այդ թվում ԲՉ | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 01 | ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ | | | | | 955 | 90 | |
| 010100 | Մաթեմատիկա | Մ(գ) | Ֆ(գ) | | Հլ(գ)* | 20 | 2 | 180 |
| 011000 | Ակտուար մաթեմատիկա | Մ(գ) | Հլգ(գ) | Օտլ(գ) | | 20 | 2 | 220 |
| 010400 | Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա | Մ(գ) | Ֆ(գ) | | Հլ(գ)* | 20 | 2 | 250 |
| 010600 | Ֆիզիկա | Ֆ(գ) | Մ(գ) | | Հլ(գ)* | 15 | 1 | 180 |
| 011200 | Ռադիոֆիզիկա և էլեկտրոնիկա | Ֆ(գ) | Մ(գ) | | Հլ(գ)* | 15 | 1 | 180 |
| 020900 | Էկոլոգիական քիմիա | Ք(գ) | Կ(գ) կամ Ֆ(գ) | | Հլ(գ)* | 15 | 1 | 180 |
| 021000 | Դեղագործական քիմիա | Ք(գ) | Կ(գ) կամ Ֆ(գ) | | Հլ(գ)* | 25 | 2 | 280 |
| 020300 | Երկրաբանություն | Մ(գ) | Ֆ(գ)** | | Հլ(գ)* | 30 | 3 | 180 |
| 020200 | Կենսաբանություն | Կ(գ) | Ք(գ) կամ Ֆ(գ) | | Հլ(գ)* | 25 | 2 | 180 |
| 020400 | Աշխարհագրություն | Ա(գ) | Մ(գ) | | Հլ(գ)* | 25 | 2 | 180 |
| 020500 | Քարտեզագրություն և կադաստրային գործ | Ա(գ) | Մ(գ) | | Հլ(գ)* | 15 | 1 | 220 |
| 020600 | Ջրաօդերևութաբանություն | Ա(գ) | Մ(գ) | | Հլ(գ)* | 10 | 1 | 180 |
| 100100 | Սերվիս | Ա(գ) կամ ՀԺՊ(գ) | Հլգ(գ) | Օտլ(գ) | | 15 | 1 | 220 |
| 030400 | Պատմություն | ՀԺՊ(գ) | ԸՊ(գ) կամ Օտլ(գ) | Հլ(գ) | | 50 | 5 | 200 |
| 031500 | Արվեստաբանություն | ՀԺՊ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 20 | 2 | 230 |
| 031400 | Մշակութաբանություն | ՀԺՊ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 15 | 1 | 230 |
| 030700 | Միջազգային հարաբերություններ | ՀԺՊ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 50 | 5 | 350 |
| 030200 | Քաղաքագիտություն | ՀԺՊ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 50 | 5 | 280 |
| 032000 | Հանրային կառավարում | ՀԺՊ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 40 | 4 | 300 |
| 080100 | Տնտեսագիտություն | Մ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 80 | 8 | 300 |
| 081800 | Կառավարում | Մ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 40 | 4 | 300 |
| 030300 | Հոգեբանություն | Կ(գ) | Հլգ(գ) | Օտլ(գ) կամ Ռլ(գ) | | 30 | 3 | 270 |
| 040100 | Սոցիալական աշխատանք | Մ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 25 | 2 | 200 |
| 031000 | Հայոց լեզու և գրականություն | Հլգ(բ) | Հլ(գ) | ՀԺՊ(գ) կամ Օտլ(գ) | | 50 | 5 | 180 |
| 030600 | Լրագրություն | Սմ(գ) | Հլգ(բ) | Օտլ(գ) կամ Ռլ(գ) | Հլ(գ) | 25 | 2 | 200 |
| 032400 | Ռուսաց լեզու և գրականություն | Ռլգ(բ) | Ռլ(գ) | Հլ(գ) | | 30 | 3 | 180 |
| 031300 | Անգլերեն լեզու և գրականություն | Անգլ(բ) | Անգլ(գ) | Հլ(գ) | | 90 | 9 | 320 |
| 031300 | Իտալերեն լեզու և գրականություն | Օտլ(բ) կամ ԻՄ(բ) | Օտլ(գ) կամ ԻՄ(գ) | Հլ(գ) | | 40 | 4 | 300 |
| 030500 | Իրավագիտություն | Հլ(գ) | ՀԺՊ(գ) | Օտլ(գ) | | 40 | 4 | 450 |
| 031900 | Աստվածաբանություն | ՀԺՊ(գ) | Հլ(գ) | Օտլ(գ) | | 30 | 3 | 200 |

DHL

Առաքեք Ձեր փաթեթը մեր իսկ գրասենյակից եւ ստացեք

25% զեղչ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ը

ք.Երեւան, Ամիրյան 27; հեռ.՝(+374 10) 58 66 88

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանությունը մտադիր է մրցութային կարգով վաճառել դեսպանությանը պատկանող ստորեւ ներկայացված 3 ավտոմեքենաները: Ցանկացողները ավտոմեքենաները տեսնելու եւ համապատասխան ձեւաթղթիկը լրացնելու համար պետք է 2008 թ. սեպտեմբերի 16-ին այցելեն ԻԻՀ դեսպանատուն:

1. Տոյոտա Լանդկրուզեր, 1992թ. արտադրության, գույնը՝ մուգ կապույտ, վազքը (առ 01/09/2008թ.) 349640 կմ.
2. ԳԱԶ-31, 2000թ. արտադրության, գույնը՝ սեւ, վազքը (առ 01/09/2008թ.) 104289 կմ.
3. Մերսեդես-Բենց բեռնատար, 1985թ. արտադրության, գույնը՝ մուգ կապույտ, ծածկով եւ վերամբարձիչով, վազքը (առ 01/09/2008թ.) 273953 կմ.

Հեռ.՝ 28-04-57 (ներքին 216)

## Սիրելի հայրենակիցներ

Սեպտեմբերի 6-ին, Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային հանդիպումը դիտելու նպատակով, Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի Հայաստան ժամանելը նախ եւ առաջ քաղաքական քայլ է:

Մեր արձագանքը նույնպես քաղաքական է:

Թուրքիան ղարաբաղյան հակամարտության հարցում ակնհայտորեն պաշտպանում է Ադրբեջանին, շրջափակման մեջ է պահում Հայաստանը:

Թուրքիան առ այսօր չի ճանաչել 1915-ի Հայոց ցեղասպանությունը: Թուրքիայում շարունակվում է հայոց պատմական-մշակութային արժեքների ոչնչացումը, հալածվում են կրոնական, ազգային փոքրամասնությունները:

Այն դեպքում, երբ Հայաստանն առաջարկում է առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատել, Թուրքիան փորձում է մեզ պարտադրել.

ա) հրաժարվել Ղարաբաղից,

բ) հրաժարվել ցեղասպանության հարցի հետապնդումից,

գ) հրաժարվել մեր ազգային-պետական իրավունքներից:

Մեր միասնական դիրքորոշմամբ փաստենք.

- հայության միասնականությունն ազգային հիմնահարցերում,
- հայության վճռականությունը ցեղասպանության ճանաչման, դատապարտման եւ հետեւանքների վերացման հարցում,
- հայության անհամաձայնությունը, որ Թուրքիան իր ներկա կեցվածքով տարածաշրջանային խնդիրներում դերակատար դառնա:

*ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆ*